

YVES TERNON. Enquete sur la negation d'un genocide. Marseille, Editions Parentheses, 1989, 227p.

ԻՎ ՏԵՐՆՈՆ, Մի ցեղասպանության ժխտման ֆենոմեն,
Մարսել, Պարանթես, հրատարակչություն, 1989, 227 էջ:

Գեղասպանության պրոբլեմի հայտնի մասնագետ Իվ Տերնոնը վերջերս լույս ընծայեց իր նոր գործը՝ «Մի ցեղասպանության ժխտման ֆենոմեն» խորագրով, ի տարբերություն նախորդ գրքերի՝ «Հայերը, Մի ցեղասպանության պատմություն», «Հայ դատը», «Հայերի ցեղասպանությունը» (Ժերար Շալյանի հետ)¹, այս վերջինը հիմնականում նվիրված է հայոց եղեռնի հարցում ժամանակակից թուրք քաղաքական մտքի և թուրքական պատմագիտության կողմից կիրառվող անվայել մեթոդների ու անսքող խեղաթյուրումների մերկացմանը, Այս հարցում Տերնոնը, թերևս արտասահմանյան մասնագետներից առավել հետևողականն է, առաջինը, որը ցույց է տվել, թե ինչպես հայոց մեծ եղեռնը հերքելու մոլուցքով տարված թուրք պատմագիտությունը, իր խոսքերով ասած՝ պետական պատմագիտությունը, աստիճանաբար վեր է ածվել կեղծիքի ու ժխտման պատմագիտության:

«Սուտը շփոթություն է առաջ բերում,—այսպես է սկսում իր գիրքը Տերնոնը և շարունակում,—հայոց ցեղասպանությունը գա մի հանցագործություն էր, ստով հովանավորված, ստով առկեցուն, և անպատժելիության երաշխիքով՝ շնորհիվ այդ հանցագործության հեղինակների աչքի զարնող երկզիմության, նրանք իրենց հետևորդներին մատակարարեցին իրենց պաշտպանությունն ապահովող բոլոր զենքերը, նրանց թույլ տվեցին կիրառելու տարհամոզելու ստրատեգիա՝ ճիշտը սուտ դարձնելու միջոցով, նման պայմաններում ակադեմիական բանավեճը բացառվում է², եթե սուտ այժմեական են պատմության ու քաղաքականության փոխհարաբերության շուրջ հեղինակի դատողությունները: Արձանագրելով հայտնի ճշմարտությունը՝ այն է, որ «օբյեկտիվությունը պատմաբանի առաջին հատկանիշն է», Տերնոնը կարծես հիշեցնում է բոլոր պատմաբաններին, որ պատմական ճշմարտությունը բացառիկ դեպքերում է համընկնում քաղաքական շահին, Գալիս է մի պահ, երբ նա վնասում է այդ շահին: Պատմաբանի խիղճը արգելում է նրան լռել կամ զանցառել, մինչդեռ քաղաքական գործիչը ստիպված է այդ րանն անելու³, Եվ ահա ելակետ ունենալով պատմաբանի խիղճն ու անալոգությունը, հեղինակը Արամ Անտոնյանի կողմից 1920-ին հրապարակված Թալեաթ փաշայի գաղտնի հեռագրերի թուրքական ժխտման օրինակով ցույց է տալիս, թե ինչպիսի շանսիստությամբ են թուրք պատմաբանները կատարում պետական-պաշտոնական պատվերը՝ բացառել, ուրանալ հայկական ցեղասպանությունը՝ խուսափելու համար այն ընդունելու բոլոր հնարավոր հետևանքներից: Սակայն ինչպե՞ս ուրանալ, եթե կատարվածը հաստատող անթիվ-անհամար փաստաթղթեր կան, դեպքերի օտար ականատեսներ, եղեռնը վերապրած հայերի հարյուրավոր ստուգված, ճշգրտված վկայություններ, Թուրքիայի դաշնակիցներ կայդերական Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի, ինչպես նաև չեզոք տերությունների դիվանագիտական ներկայացուցիչների զեկուցագրեր, ծածկագիր հեռագրեր, ակամա խոստովանություններ և այլն: Հասարակ մի բան. լուռության մատնել այդ բոլորը, շրջանցել, ծայրահեղ դեպքում պնդել, որ, ասենք, լուրջ Բրայսի ու Առնոլդ Թոյնթի կազմած փաստաթղթերի ստվարածավալ ժողովածուն չէր կարող անաչառ լինել, քանի որ նրանք Թուրքիայի դեմ պատերազմող Անգլիայի ներկայացուցիչներն էին, որ ղոկտոր լեփսիուսի կազմած «Հաղորդումը հայ ժողովրդի վիճակի մասին Թուրքիայում» և «Գերմանիան ու Հայաստանը դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուն նույնպես չեն կարող հաշվի առնվել, որովհետև լեփսիուսը հայասեր էր, որ ԱՄՆ-ի

¹ Yves Ternon, Les Arméniens. Histoire d'un génocide. Paris, 1977, Yves Ternon, La cause arménienne. Paris, 1983, Gerard Chailand, Yves Ternon, Lé genocide des Arméniens, Bruxelles, 1980.

² Yves Ternon, Enquete . . . , p. 9.

³ Նույն տեղում, էջ 10—11.

«դեպքան Մորգենթաուն ևս չէր կարող անաշու լինել, քանի որ նա իր հաշիվն ուներ Թուրքիայի հետ և այսպես շարունակ: Եվ նման ձևով խեղաթյուրելով պատմությունը, միջազգային հանրությանը ներկայացնել թուրքական թեզը՝ «հայոց ցեղասպանությունը ոչ այլ ինչ է, և թե ոչ՝ հայկական պրոպագանդի կողմից թխված մի արտագրանք»: Եվ քանի որ չի եղել ցեղասպանություն, ուստի հայերի բոլոր պահանջները զուրկ են որևէ հիմքից, հիմնադուրկ են այսպիսով հայկական պահանջները, բայց ոչ թուրքականը: Թուրքերը հայերի դոճերն են եղել, նրանք դարձել են հայերի կողմից կիրառված ցեղասպանության զոհեր⁴:

Մուղակը կոպիտ է և ձախողակ, եղբակացնում է Տերնոնը, քանզի իրենց մեղադրանքը հաստատելու համար թուրք պատմաբաններին հարկ էր պատշաճ պատասխաններ գտնել, իրենց ասածն ապացուցող վավերական փաստաթղթեր առաջադրել, որը նրանք ի վիճակի չէին անելու: Դրա դիմաց Բալենաթի հեռագրերի խնդիրները կասկածի տակ առնելու թուրքական փորձերն ի վերջո հանգեցրին այն բանին, որ վերստին հաստատվեց հայերի դեմ կատարված հանցագործության կանխամտածված բնույթը:

«Այսպիսին է ուղիղորդի ոխակը,—նշում է Տերնոնը—Ստիպել ի հայտ բերել մինչև այդ արհամարհված ապացույցները⁵: Այստեղ հետաքրքրական է հեղինակի անցկացրած դուրդաճուր պատմության ուղիղալի հարցում՝ կապված հրեաների ու հայերի ցեղասպանության հետ: Նրբ հետապնդման տարիներին⁶ անճոռնի փորձ արվեց կասկածի տակ առնել եվրոպական հրեաների ցեղասպանության փաստը նախատական բնաշնչման ճամբարներում, ապա դա այնպիսի զայրույթ առաջ բերեց, որ ստիպեց վերականգնել հրեաների ցեղասպանության ապացույցները: Դաշնակից տերությունների հավաքած փաստաթղթերը և բաղմաթիվ դատավարությունները բավարար չյուր մատակարարեցին այդ փաստը ժխտելու փորձերը ձախողելու համար:

Սակայն նույն բանը տեղի չունեցավ հայերի դեպքում, ավելացնում է Տերնոնը: Եվ ոչ թե այն պատճառով, որ ճշմարտությունը վիճարկելի էր, այլ պարզապես ոճիրը քողարկված էր առավել ճարպկորեն. ստեղծվել էր գաղափարական հաշտողականություն հանցավոր պետության և նրա հետևորդների, այսինքն քեմալականների միջև, և որ հանցագործությունը շարունակվում էր, իսկ ժամանակը հայերի օգտին չէր ընթանում: Եվ ի վերջո լուգանի դաշնագիրը վերջ դրեց հայկական հարցին, իսկ Թուրքիայի կառավարությունները ժխտեցին հայերին բնաշնչելու ուղղությամբ իրենց կանխամտածված գործողությունները:

Այս բոլորից հետո գրախոսվող գրքի հեղինակը եղբակացնում է, որ Արամ Անտոնյանի հրապարակած փաստաթղթերի քննությունը միայն նպատակ չունի որոշել, թե իսկակա՞ն են դրանք. թե ոչ, այլ ցույց տալ, որ պատմական ուղիղորդի դեպքում հնարավոր փոխդիմում չի կարող լինել, որովհետև այստեղ երկու տարբեր մոտեցումներ են, երկու տարբեր աշխարհներ, որոնցից, ամենից ցանկանում է պահպանել հիշողությունը, մյուսը՝ հիշողության միջոցով ոչնչացնել հանցագործության հետքերը⁷: Հեղինակի հետևությունն այն բանալին է, որն ընթերցողին օգնում է առավել խոր ըմբռնելու ժամանակակից թուրք պատմաբանների կողմից նոր թափով սկսված հակահայկական բանասարկությունների բուն շարժառիթները: «Հիշողության գերեզմանափորները սաղրիներ են,—գրում է հեղինակը—Իրենց կեղծիքի ահռելիությամբ խզելով գիտական հստակ բանավեճը, նրանք չանում են իրենց հակառակորդների մեջ առաջ բերել զայրույթի պոթկումներ, որոնք կարող են նրանց վարկարկել: 1878—1923 թթ. ժամանակաշրջանի մասնագետների միջև օբյեկտիվ ու քաղաքավարի բանավեճի համաձայնվելու փոխարեն թուրք պատմաբանները գոռոզամտորեն մերժում են ամեն մի մոտեցում: Գիտության մարդն իրեն չպետք է թույլ տա նման չղազրգույթություն: Սակայն համոզելու խոսքը ուղղված է նրանց, ովքեր ցանկանում են տեղեկություն ստանալ: Ձուր կլինել փորձել համոզել ստախոսին, որովհետև եթե նա ինքը գիտի, որ ստում է, ինչպես կարող է նա, իր մեջ կրելով մեղքը, խոստովանել այն, ինչ համարձակորեն քողարկում է ինքը: Նրա կեղծիքի մերկացումը նրան չի ստիպի հրաժարվել դրանից⁸:

Մենք այսօրն ծանրացանք գրքի առաջաբանի վրա, որովհետև այն լափաղանց կարևոր է ժամանակակից թուրք պատմաբանների մեթոդները ճիշտ հասկանալու տեսակետից:

⁴ Նույն տեղում, էջ 11—12:

⁵ Նույն տեղում, էջ 12:

⁶ Նույն տեղում, էջ 13:

⁷ Նույն տեղում:

Հետաքրքիր հարցադրումներ և փաստական նոր նյութ են պարունակում առաջին երեք դրսիները: Հեղինակը հանգամանորեն անդրադառնում է երիտթուրքերի կառավարության անկման նախօրյակին և նրա խայտառակ անկումից հետո Կ. Պոլսի սուլթանական շրջաններում ստեղծված տրամադրություններին, նրանց ձեռնարկած քայլերին՝ ահալոր հղեմագործության ողջ պատասխանատվությունը փախուստի դիմած երիտթուրքական պարագլուխների վրա բարդելու համար, քանդի նրանք հասկանում էին, որ Թուրքիայի պարտությունից հետո իրենցից հաշիվ էին պահանջում:

«Մեկ և կես տարի,—գրում է Տերնոնը,—Կ. Պոլսի թուրքական մամուլը խոսում էր հայկական շարժերի մասին: Թերթերը լեցուն էին պաշտոնական հայտարարություններով, որոնցում դուրս էին թափվում այն վախն ու ամոթը, որոնք զսպված էին երիտթուրքական ուժերի օրոքած, նաև հաշիվներ էին մաքրում: Ոմանք մեղադրում էին, մյուսները՝ պաշտպանվում: Այն ժամանակ չէին ասում, թե կանխամտածված սպանություն չի եղել, այլ ասում էին. «Այդ ևս չէի, դա ուրիշն էր», կամ «ես սոսկ հրամաններին էի ենթարկվում»: Ջնշել իր իսկ պատմություն մեկ և կես տարին, վերացնել ամեն մի վկայակոչում այն ժամանակ լույս տեսնող տասնյակ լրագրերից, դրանով իսկ ջնշելով հետքերը, դա մի վիթխարի ձեռնարկում է, որին դիմեցին ներկա թուրք կառավարությունը և Թուրքիայի պատմության ընկերությունը, նշում է Տերնոնը»:

Հետաքրքրություն է ներկայացնում զահաժառանգ Արզուլ Մեշիգի խոստովանությունը „Morning Post“ թերթի թղթակցին. «Ջարդերը առավել անջնշելի այն հետքերն են, որոնք վարկերենցին մեր ազգը և մեր ժողովուրդը: Կոտորածը Թալեաթի ու էնվերը հործնելու նախքան ոչնչացման գործը սկսվելը, ես հարցրեցի էնվերին, թե արդյո՞ք իրենք ունեն շարժերի ծրագիր: Նա ինձ շատ պարզ պատասխանեց, որ այդ հարցի շուրջ գոյություն ունեն հաստատ որոշումներ, որոնք իրենց ծրագրի մասն են կազմում: Ես դիմեցի սուլթանին, նրան աղաչելով միջամտել: Նա ինձ խոստացավ այդ մասին խոսել էնվերի հետ, բայց նա դրանից շատ բան չէր սպասում»¹⁰, Հեթերցոդը նաև հետաքրքիր տեղեկություններ կցտնի 1918-ի նոյեմբերին սուլթան Մեհմեդ VII-ի հրամանով ստեղծված հետաքննական այն հանձնաժողովի մասին, որը գլխավորում էր Անկարայի նախկին վալի Մադհար բեյը: Վերջինս 1915-ի հուլիսին բացեցի բանտը, հանգստի էր եկել հայերի բռնադատված դեմ և Թալեաթի պահանջով հրաժարական տվել: 1918-ի նոյեմբերին Մադհար բեյը մի հարցաթերթիկ է ուղարկում Թուրքիայի բոլոր նահանգները, նպատակ ունենալով երդման տակ զբաղեցնել թուրք պատասխանատու անձանց (քաղաքական թե ուղղական) հայտարարությունները: Նրան հաջողվում է հավաքել մեծ քանակությամբ ծածկագիր հեռագրեր՝ հասցեագրված ներքին գործերի մինիստրության կողմից նահանգապետներին, ռազմական մինիստրության կողմից՝ բանակային հրամանատարներին, իսկ Իթթիհատի կենտրոնական կոմիտեի կողմից՝ վիլայեթների հատուկ պատասխանատուներին, և այլ փաստաթղթեր, որոնց թիվը հազարների էր հասնում: Այդ փաստաթղթերի մի մասը տպագրվում է թուրքական «Թաքվիմ-ի վեթախ» պաշտոնաթերթում, իսկ սրանց մի մասն էլ, թարգմանվելով օսմաներենից, տպագրվում է Կ. Պոլսում ֆրանսերեն լույս տեսնող «La Renaissance» օրաթերթում: Երազարվածի հիման վրա Իվ Տերնոնը եզրակացնում է, որ բլ մի հիմք չկա կասկածի տակ առնելու Արամ Անտոնյանի հրատարակած Թալեաթի հեռագրերի իսկությունը: Միաժամանակ նա գտնում է, որ Մադհար բեյի հանձնաժողովի նյութերն ամենայն հավանականությամբ ժամանակին անհետացրել են, քանի որ դրանց մասին 1920 թ. սկսած թուրքական արխիվներում ոչ մի հիշատակություն չկա:

Գրախոսվող գրքում հատուկ գլուխներ են հատկացված հայաստանության կազմակերպիչներին՝ Թալեաթի, Ջեմալի, ղոկտոր Նազըմի, Բեհաեդդին Շաքիրի և մյուսների անմարդկային կերպարին, ըստ որում վերջին երկուսին հեղինակն անվանում է «Գեներոսիդի ճարտարագետներ»¹¹, Գեհազատի են հեղինակի պրպտումները հայերի ոչնչացման նպատակով ստեղծված «Թեքթիլաթ-ի մահսուսեի» («Հատուկ կազմակերպություն») գործունեության մութ ծաղրերը վերհանելու տեսակետից, ըստ որում հեղինակը հղումներ է անում թուրքական, ամերիկյան և ֆրանսիական վերջին հրապարակումներից: Պարզվում է, որ դարձուրելի այս կազմակերպության գաղափարը հղացվել է տակավին 1911 թ. և այն ստեղծվել է նույն տարվա

8 Նույն տեղում, էջ 36:

9 Նույն տեղում:

10 Նույն տեղում, էջ 42:

11 Նույն տեղում, էջ 143:

դեկտեմբերին Տրիպոլիտանիայում պատերազմող թուրք սպանների կողմից, որոնք հետագայում ծառայություններ են մատուցել 1912—1913 թթ. Բալկանյան պատերազմների ժամանակ, մասնավորապես Ադրիանապոլիսը գրավելիս։ Այդ մարդիկ, գրում է Տերնոնը, բաժանում էին նույն դադափարը՝ Ջեմալ էդ-դին Աֆղանի պանիսլամիզմը և չնվերի ներշնչած պանթուրքիզմը։ Պատերազմի նախօրյակին «Թեշքիլաթ-ի մահսուսեի» շարքերում կար 30 հազար մարդ։ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո կազմակերպության ղեկավարությունն անցավ մոլի հայաության բժիշկ Բեհաէդդին Շաքիրի ձեռքը, որն այդ լավ զինված ու կազմակերպված ուժի մի մասը շեղեց ռազմական բնույթի առաջադրանքներից՝ իր հանցավոր նպատակներին ծառայեցնելու համար¹²։ Բայց կար նաև մի երկրորդ «հատուկ կազմակերպություն», որը ստեղծվել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտկոմի կողմից՝ Ներքին և արտարադատության մինիստրությունների համագործակցությամբ։ Այս կազմակերպությունը սկզբից ֆինանսավորվում էր Իթթիհատի կուսակցության զաղտնի ֆոնդերով, իսկ հետո դարձավ ինքնաբավ՝ հայերից հափշտակված դրամի ու քանկարժեք իրերի շնորհիվ։ Գրքում մանրամասն տրված են այս երկրորդ կազմակերպության կողմից արևմտահայերի դեմ կիրառված վայրագությունները, որոնց մասին խոսվել է նաև 1919-ի ապրիլ-հուլիսին Կ. Պոլսում ընթացող երիտթուրքերի հայտնի դատավարության ժամանակ¹³։

Հիշյալ կազմակերպությունը ցրվել է 1918-ի նոյեմբերին՝ Թալեաթի կառավարության անկումից հետո, իսկ 1919-ին այն վերանվանվել է «Թեշքիլաթ միլլեթ»։ 1919-ի նոյեմբերի 29-ին Ադրբեյջանի անկախ հանրապետության և Անկարայի ազգային ժողովի ներկայացուցիչները ստորագրել են զաղտնի մի համաձայնագիր, իսկ 6 ամիս հետո մեկ ուրիշը՝ խիստ ռազմական բնույթի, ուղղված Հայաստանի անկախ հանրապետության դեմ։ 1920-ի համաձայնագրով նախատեսվում է «Թեշքիլաթ-ի մահսուսեի» օգտագործումը Ադրբեյջանը ոչ թուրք տարրերից, մասնավորապես հայերից պարպելու գործողություններում¹⁴։

Գրքի վերջաբանում իվ Տերնոնը նշում է, որ Թուրքիան զնալով ավելի է խրվում կեղծիքի ճահիճը, մինչդեռ պատմական ճշմարտության հիշեցումը նրան ցույց է տալիս դեմոկրատիայի ճանապարհը։

«Ստի պահպանումը թանկ է նստում, մինչդեռ դեմոկրատիան զին շունի»¹⁵,—այս խոսքերով է ավարտում հեղինակն իր խիստ այժմեական ու բովանդակալից աշխատությունը, որի բնաբանն իր հերթին օգնում է առավել ճիշտ ընկալելու իվ Տերնոնի գրքի նշանակությունը։ Դա մի թուրքական առած է, որն ասում է. «Ծարպիկ գողը դա այն գողն է, որ, կախել է տալիս իր իսկ կողմից թալանվածին»¹⁶։

Ռ. Գ. ՄԱՀԱԿՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

¹² Նույն տեղում, էջ 155—156։

¹³ Այդ մասին մանրամասն տե՛ս «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափաղյանի, Երևան, 1988։

¹⁴ Yves Ternon, Enquête..., p. 157—166.

¹⁵ Նույն տեղում, էջ 219։

¹⁶ Նույն տեղում, էջ 15։